ՆԱԽԱԳԻԾ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի N 27-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16–Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 16–ի նիստի հետևյալ օրակարգը՝

1.1. «Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին

1.2. «Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու համաձայնություն տալու մասին

1.3. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող 10-016-0201-0107 կադաստրային ծածկագրով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

1.4. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցութային կարգով, վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին.

1.5. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 30-ի N 70-Ա, 2026 թվականի ապրիլի 9-ի N 91-Ա և N 92-Ա որոշումները հաստատելու մասին

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

1.7. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություն կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին դիմելու մասին

1.8. Ջերմուկ համայնքի ավագանու իններորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: